

Մ Ա Ս II

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՄԱՍ II-Ա

Տնտեսական ցուցանիշների կանխատեսումներ

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական միտումները

Վերջին տարիները բնորոշվում են Հայաստանի Հանրապետությունում տնտեսության զարգացման և բնակչության կենսապահովման մակարդակի բարելավման հստակ միտումներով:

Մասնավորապես՝ սկսած 1994 թվականից հանրապետությունում արձանագրվել է անընդմեջ տնտեսական աճ, 1994-2003 թվականներին միջինը կազմելով տարեկան 7.46 տոկոս: Հատկանշական է, որ 2002-2003 թվականներին տնտեսական աճը կազմել էր երկնիշ թիվ: 2004 թվականին նույնպես սպասվում է ՀՆԱ-ի տարեկան իրական աճի բարձր տեմպեր՝ առնվազն 8%:

Նույն ժամանակահատվածում սղաճի ցուցանիշները պահպանվել են վերահսկելի շրջանակներում և տարեկան կտրվածքով չեն գերազանցել 3%-ի սահմանագիծը, ինչը ձեռավորել է գների փոփոխության ռացիոնալ սպասումներ եւ վերածվել է Հայաստանում կայուն տնտեսական աճի գրավականի:

Եթե պաշտոնական վիճակագրության համաձայն՝ մինչև 2001 թվականը տնտեսական աճի արդյունքում զբաղվածության աճ չէր գրանցվել (չնայած այն հանգամանքին, որ իրական զբաղվածության աճը անվիճելի էր նաեւ վերջին մի քանի տարիներին), ապա սկսած 2002 թվականից տնտեսական աճը զուգակցվում է զբաղվածության պաշտոնական տվյալների դրական

փոփոխություններով: Տնտեսական աճին եւ զբաղվածությանը զուգահեռ ավելացել են բնակչության դրամական եկամուտները եւ դրմական ծախսերը: Այսպես, եթե 2002 թվականին բնակչության դրամական եկամուտները եւ դրամական ծախսերը ավելացել էին համապատասխանաբար 14.6 եւ 17.2 տոկոս, իսկ 2003 թվականին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 15.1 եւ 17.5 տոկոս:

Աղքատության հաղթահարման դիմամիկայի տեսանկյունից նույնպես զարգացումները հուսադրող են: 2002 թվականի տնային տնտեսությունների հետազատությունների արդյունքների համաձայն աղքատության ցուցանիշը 2001 թվականի համեմատ կրճատվել էր մոտ 1.3 տոկոսային կետով: Ավելի արագ էր կրճատվել ծայրահեղ աղքատությունը՝ 2.9 տոկոսային կետով: Համաձայն 2003 թվականի տնային տնտեսությունների հետազատությունների նախնական արդյունքների նշված միտումները շարունակվել են նաեւ 2003 թվականին: Բնակչության աղքատության մակարդակը այդ ժամանակաշրջանում կազմել է 42.9 %՝ 2002 թվականի նկատմամբ նվազելով 6.8 տոկոսային կետով: Ընդ որում, շատ աղքատ բնակչության աղքատության մակարդակը կազմել է 7.4% եւ նվազել է 5.7 տոկոսային կետով: Եթե աղքատության կրճատումը հարաբերական մեծությամբ նշված երկու տարիներին կազմել էր մոտ 13.7 տոկոս, ապա ծայրահեղ աղքատությունը կրճատվել է մոտ 43 տոկոսով: Նշված ժամանակաշրջանում գրանցվել է բնակչության բեռնացման մակարդակի նվազման միտումը: Սակայն դեռևս պահպանվում է դրա բարձր մակարդակը. ըստ ընդհանուր եկամուտների այն կազմում է 0.434՝ 2002թ. 0.449-ի դիմաց, ըստ ընթացիկ եկամուտների՝ 0.438, 0.451-ի դիմաց, իսկ ըստ ընթացիկ ծախսերի՝ 0.271, 0.325-ի դիմաց:

Շարունակվում է պետության ֆինանսական կարողությունների ամրացման գործընթացը: Սկսած 2001 թվականից արձանագրվել են հարկային եկամուտների անընդմեջ աճ և դրան զուգահեռ՝ պետական բյուջեի դեֆիցիտի գումարների ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերության մեծությունների նվազման հստակ միտումներ:

Արդյունավետ միջոցներ են ձեռնարկվել հարկային վարչարարության եւ բյուջետային կարգապահության ամրապնդման ուղղությամբ, ինչի շնորհիվ 2003 թվականին հնարավոր եղավ կուտակել մոտ 12 մլրդ դրամ, որը սահմանված կարգով կուղղվի ենթակառուցվածքների եւ սոցիալական հատվածի զարգացմանը:


Տնտեսական ցուցանիշների կանխատեսումներ

Իրական հատված

2001-2003 թվականներին արձանագրվեցին համախառն ներքին արդյունքի աննախադեպ բարձր աճի տեմպեր՝ միջինում տարեկան 12.2 տոկոս, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ է ետխորհրդային երկրների տնտեսությունների համար: Ընդ որում, վերջին տարիներին տնտեսական աճի տեմպերը էլ ավելի արագացան: Այսպես, 2001-2003 թվականների միջին տարեկան աճի տեմ-

պերը ավելի քան երկու անգամ գերազանցում են դրանց նախորդած երեք տարիների տնտեսական աճի տեմպերը¹:

ԱՊՀ երկրներում եւ Հայաստանում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1989-2007 թվականների ընթացքում



Հայաստանում տնտեսական զարգացումները ԱՊՀ անդամ մյուս երկրների համեմատությամբ առանձնահատուկ են նաեւ ՀՆԱ-ի ետխորհրդային մակարդակի նկատմամբ վերականգնման աստիճանի տեսանկյունից²: 1990–1993 թվականների շարունակական տնտեսական անկման արդյունքում 1993 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի մակարդակի ընդամենը 44.3%-ը (անկումը կազմել էր ավելի քան 55%): Նույն ժամանակահատվածում ԱՊՀ երկրների միջինացված ՀՆԱ ցուցանիշը կազմել էր 1989 թվականի 70.6 %-ը (անկումը կազմել էր 29.4 %): Չնայած այդ հանգամանքին, շնորհիվ հետագա տարիներին արձանագրված անհամեմատ բարձր տնտեսական աճի ցուցանիշների, Հայաստանում 2003 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի 90.5% այն դեպքում, երբ ԱՊՀ մյուս երկրներում այդ ցուցանիշը կազմել էր ընդամենը 74.5%: Եթե Հայաստանի տնտեսությունը միջինժամկետ զարգացման անգամ զուշավոր կանխատեսումների պարագայում զարգանա նախանշված տեմպերով (տես կից աղյուսակը), ապա 2005 թվականին ՀՆԱ մակարդակը կգերազանցի 1989 թվականի մակարդակը 5.5 տոկոսային կետով:

Տնտեսության զարգացման բարձր աճի տեմպերը թեև ավելի զուսպ, սակայն շարունակվեցին նաև 2004 թվականին՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է 10.3% տնտեսական աճ: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճին նպատման գործում մեծ դեր են ունեցել ոչ նյութական ծառայությունների, գյուղատնտեսության և շինարարության ոլորտները, որոնց հաշվին ապահովվել է տնտեսական աճի համապատասխանաբար 2.5, 3.7 և 1.8 տոկոսային կետը: Հաշվի առնելով 2004 թվականի առաջին ինն ամիսների միտումները՝ 2004 թվականի համար ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է առնվազն 8.0, իսկ ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 4.0%-ի սահմաններում:

¹ 1998-2000 թվականներին ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կազմել է 5.5 տոկոս:

² Համեմատության համար հիմք է ընդունվել 1989 թվականը՝ խորհրդային շրջանում Հայաստանում տնտեսական աճի վերջին տարին:

Վերջին տարիներին տեղի ունեցած դրական փոփոխությունների արդյունքում ՀՆԱ-ի կազմում տեղի ունեցան էական կառուցվածքային տեղաշարժեր: Տնտեսական աճի մեջ մեծ ներդրում ունեցան արդյունաբերության և շինարարության ճյուղերը: Մասնավորապես, 2002-2003 թվականներին արդյունաբերության և շինարարության ճյուղերը ապահովել են արձանագրված տնտեսական աճի կեսից ավելին³: Արդյունքում շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2001 թվականի 9.7 %-ից հասել է 15.5 տոկոսի 2003 թվականին, արդյունաբերության տեսակարար կշիռը մնացել է գրեթե անփոփոխ՝ մոտ 20 տոկոս, իսկ գյուղատնտեսության տեսակարար կշիռը 2001 թվականի 25.5 տոկոսից նվազել է և 2003-ին կազմել ՀՆԱ-ի 21.3 տոկոսը:

2004 թվականի հունվար-սեպտեմբերին բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 17.3%-ով: Ըստ 2004 թվականի հունվար-օգոստոսի տվյալների բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի և բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունները, համապատասխանաբար՝ 29.8 և 26.9%:

Չնայած ոչ բարենպաստ բնակլիմայական պայմաններին, վերջին տարիներին գյուղատնտեսությունում արձանագրվել է կայուն աճ: Աճ է գրանցվել նաև 2004 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ 17.2%, ինչը պայմանավորված է եղել ինչպես անասնապահության, այնպես էլ բուսաբուծության ծավալների աճով:

Շինարարության ճյուղի աճը վերջին երեք տարիներին կազմել է միջինում 30%: Շինարարության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հաղիսացել բնակչության և կազմակերպությունների, ինչպես նաև մարդասիրական օգնության միջոցները՝ այդ թվում Լիբնսի հիմնադրամի միջոցները: 2004 թվականիին ամիսների ընթացքում իրականացված շինարարության ծավալները աճել են 16%-ով: Բնակչության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են ընդամենը իրականացված կապիտալ շինարարության համապատասխանաբար 67.6 և 18.9%-ը: Շինարարության հիմնական ուղղությունները եղել են անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման, տրանսպորտի և կապի ոլորտները:

2004 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների ընդամենը 1.6 տոկոս աճ: Նման ցածր աճը պայմանավորված է մշակող արդյունաբերության երկու խոշոր ճյուղերի՝ մետաղագործական արդյունաբերության և ոսկերչական արտադրատեսակների արտադրության թողարկման ծավալների անկմամբ՝ համապատասխանաբար 8.0 և 15.8%-ով: Աճին նպաստող ճյուղերն են՝ սննդամթերքի արտադրությունը, հանքագործական և քիմիական արդյունաբերությունները, ինչպես նաև մեքենաների և սարքավորանքի արտադրությունը:

2002 թվականից սկսած ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառման ծախսերն ունեն նվազման միտում: 2003 թվականին դրանք կազմել են ՀՆԱ-ի 93.2%-ը⁴ 2001 թվականի 100.9%-սի

3 2002 թվականի 13.2% տնտեսական աճի 6.7 տոկոսային կետը, 2003 թվականի 13.9% աճի 8.5 տոկոսային կետը:

4 Ներառված է վիճակագրական շեղումը:

դիմաց: Դրան գուգահեռ համախառն ազգային խնայողությունների ծավալները ՀՆԱ-ի մեջ ունեցել են աճի միտում և 2001 թվականի 10.3%-ից 2003 թվականին հասել են 17.9%-ի⁵: Ներդրումները ՀՆԱ-ում 2003 թվականին հասել են իրենց առավելագույն մակարդակին տնտեսական աճի գրանցման ողջ ժամանակահատվածում. դրանք կազմել են ՀՆԱ-ի մոտ 25%-ը:

Հարկաբյուջետային հատված

2003 թվականի հարկային եկամուտները և տուրքերը կազմեցին ՀՆԱ-ի 14.0%-ը, ինչը 0.6 տոկոսային կետով ցածր է, քան 2002 թ. ցուցանիշը: Հարկային եկամուտների եւ տուրքերի հարաբերականորեն ցածր մակարդակը պայմանավորված է ՀՆԱ-ի կառուցվածքում հարկազատված ճյուղերի մեծ տեսակարար կշռով եւ այդ ճյուղերի ավելի բարձր աճի տեմպերով: 2004 թվականի կանխատեսվող ցուցանիշը կկազմի մոտ 14.5%, իսկ 2005 թվականի ծրագրայինը՝ 15.1%: Հատկանշական է, որ հարկային եկամուտների ավելացումը կատարվում է համեմատաբար կայուն դրույքաչափերի եւ տնտեսության ստվերային հատվածի կրճատման պայմաններում:

Վերջին տարիների հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ձեռքբերումներից է ծրագրային բյուջետավորման տարրերի ներդրումը, մասնավորապես՝ բյուջետային ֆինանսավորման հայտերում ֆինանսավորում պահանջող ծրագրերի իրականացումից ակնկալվող արդյունքների ներկայացումը:

Դրամավարկային հատված

2004 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված է սղաճի կառավարմամբ ապահովել վերջինիս միջին տարեկան մոտ 7.7% մակարդակը՝ փողի զանգվածի 12.2% եւ փողի բազայի 4.9% աճի պայմաններում: Ինչ վերաբերում է դրամական ագրեգատների ծավալային ցուցանիշներին, ապա 2004 թվականի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ փողի բազան տարեսկզբի ցուցանիշի նկատմամբ նվազեց 3.8 տոկոսով եւ բարձր էր ծրագրով նախատեսված ցուցանիշից 0.6 տոկոսով: Ընդհանուր առմամբ 2004 թվականի ինն ամիսների ընթացքում դրամային ագրեգատների ծավալային ցուցանիշները գրեթե համընկել են ծրագրայինի հետ: 2004 թվականի ինն ամիսների ընթացքում Հայաստանում դիտվել է փոխարժեքի արժեքավորում, որը մեծապես պայմանավորվել է արտարժույթի մեծածավալ ներհոսքով, տրանս-ֆերտ-ների աճով: Անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ այն, որ ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեքի ար-ժե-քավորման պրոցես է նկատվել նաեւ միջազգային մասշտաբով: Լողացող փոխարժեքի պայմաններում ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը առաջնորդվել է սղաճի կարգավորմամբ, եւ ՀՀ կենտրոնական բանկը կապահովի սղաճի մինչեւ 3% մակարդակ:

Սպառողական զմեռ

⁵ ՀՀ ՖԷՆ մակրոտնտեսական քաղաքականության վարչության հաշվարկներ:

2004 թվականի ինն ամիսների ընթացքում սղաճի ցուցանիշը հիմնականում չի գերազանցել սպասված մակարդակը: Հուլիս ամսին նկատվեց սպասվածից ավելի ցածր գնանկում, իսկ օգոստոսին, ընդհակառակը, ավելի բարձր գնանկում, որը մեծապես պայմանավորված էր մրգի եւ բանջարեղենի գների նվազմամբ:

Սպառողական գների ինդեքսը 2004 թվականի սեպտեմբերին 2003 թվականի դեկտեմբերի համեմատ կազմել է 98.7%, ինչը 2.3 տոկոսային կետով նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (101.1%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք եւ ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 98.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 99.6 %, ծառայությունների սակագներինը՝ 100.8%:

Արտաքին հատված

Վերջին տարիներին բնորոշ է ընթացիկ հաշվի հիմնական գործոն՝ ապրանքների արտաքին առևտրի բացասական մնացորդի կրճատում դրական միտումը, որը մի կողմից պայմանավորված է ներմուծման փոխարինմամբ, մյուս կողմից՝ արտահանման ընդլայնմամբ: Արտահանման աճի տեմպերի արագացումը նկատվել է դեռ 2000 թվականից: 2000-2003 թվականներին արտահանման միջին տարեկան ծավալը 1999 թվականի համեմատ աճել է շուրջ 89%-ով և կազմել 468 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ցուցանիշների աճով: Արդյունաբերության տարբեր ենթաճյուղերի աճը նպաստավոր պայմաններ է ստեղծել մոտ ապագայում արտահանման բազմազանեցման (դիվերսիֆիկացման) համար: 2000-2003 թվականներին ներմուծման միջին տարեկան մակարդակը կազմել է մոտ 890 մլն ԱՄՆ դոլար՝ 1999 թվականի համեմատ աճելով շուրջ 23%-ով: Արտաքին առևտրի բնականոն զարգացման և արտահանման խթանման քաղաքականության դրական արդյունքների մասին է վկայում ներմուծման ծածկման գործակցի բարձր մակարդակը: Չնայած 2003 թվականին գրանցված ներմուծման բարձր աճի, վերջինիս ծածկումը արտահանումով կազմել է շուրջ 61%, հավասարվելով իր 1993 թվականի մինչանկումային առավելագույն արժեքին: Տնտեսության բացվածության աստիճանը, կամ ապրանքների եւ ծառայությունների առևտրաշրջանառություն / ՀՆԱ հարաբերակցությունը, 2003 թվականին կազմել է մոտ 82 տոկոս նախորդ երեք տարիների միջինում 74%-ի դիմաց:

1995-1998 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել էր՝ 1995 թվականի 368 մլն ԱՄՆ դոլարից 1998 թվականին հասնելով 515.7 մլն ԱՄՆ դոլարի (առանց պաշտոնական տրանսֆերտների): ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդի հարաբերակցությունը այդ թվականներին կազմել է միջինում շուրջ 27 տոկոս: 1999 թվականին, պայմանավորված գերազանցապես արտաքին առևտրի հոսքերով (մասնավորապես՝ ներմուծման ծավալների կտրուկ նվազմամբ), ընթացիկ հաշվի պակասուրդը կազմեց 400.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ում՝ 21.7%: 2000-2003 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը էապես կրճատվեց՝ 2003 թվականին հասնելով մոտ 251 մլն ԱՄՆ դոլարի: ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը 2003 թվականին հասավ 8.9 %-ի:

Վերջին տարիներին հատկանշական ձեռքբերումներից է նաև պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ պետական պարտքի մակարդակի կրճատումը: Նախորդ երեք տարիների միջինում 44 տոկոսի դիմաց արտաքին պետական պարտքը 2003 թվականին կազմել է ՀՆԱ-ի 39.1 տոկոսը: Երկիրը շարունակում է պահպանել իր զուտ պարտապանի կարգավիճակը, մինչդեռ տնտեսության ինքնաֆինանսավորման մակարդակը⁶ աճում է, կազմելով 2003 թվականին 49.8 տոկոս նախորդ երեք տարիների միջինում 41 տոկոսի դիմաց: Պաշտոնական պահուստային ակտիվների մակարդակը 2003 թվականին ավելացել է 70.7 մլն. ԱՄՆ դոլարով, սպահովելով ներմուծման 4.3 ամսյա ծածկույթ:

2004 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության աճի միտումը շարունակվում է՝ ընթացիկ տարվա ինն ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ այն ավելացել է 3.1 տոկոսով եւ կազմել 1485.6 մլն.ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա նկատմամբ ՀՆԱ-ի աճը, արտահանվող ապրանքների մրցունակության աստիճանի բարձրացումը, համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը մեծապես նպաստել են արտահանման աճին: Չնայած նրան, որ վերջինս նախորդ տարվա ինն ամիսների նկատմամբ աճել է ընդամենը 1.3%-ով և կազմել 511.1 մլն ԱՄՆ-ի դոլար, արտահանման ապրանքային կառուցվածքից բացառելով «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի մասնակցությունը, արտահանման աճը 2004 թվականի ինն ամիսներին կկազմեր 13.9%: Գրամի արժեքավորումը և բնակչության դրամական եկամուտների աճը նպաստել են ներմուծման աճին, որը ինն ամիսների տվյալներով կազմել է 974.5 մլն ԱՄՆ-ի դոլար և աճել 4.1%-ով, ընդ որում առանց «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, ներմուծումը ավելացել է 8.1%-ով:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների արտահանումը անցած ինն ամիսներին կազմել է 22 տոկոս 2003 թվականի 28 տոկոսի դիմաց: Ընթացիկ տարվա ինն ամիսների արդյունքներով ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմել է մոտ 43 տոկոս նախորդ տարվա նույն ցուցանիշի՝ 51 տոկոսի փոխարեն:

Տնտեսություն իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը⁷ 2004 թվականի առաջին վեց ամիսներին կազմել է 106.3 մլն ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 41.2%-ով: Հունվար-հունիս ամիսներին իրականացված 64.7 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղակի ներդրումների 32.7%-ը ուղղվել է կապի, 26.9%՝ սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությանը և 15.6%-ը՝ օդային տրանսպորտի գործունեության ոլորտին:

2004 թվականի ինն ամիսների արտաքին ապրանքաշրջանառության 20.2%-ը բաժին է ընկել ԱՊՀ, իսկ 36.9՝ տոկոսը Եվրոմիության 25 երկրներին: ՀՀ խոշոր առևտրային գործընկերներն են Բելգիան, Իսրայելը, ԱՄՆ-ն, Գերմանիան, Մեծ Բրիտանիան եւ Իրանը, իսկ ԱՊՀ

⁶ Եթե այն գերազանցում է 100%, ապա երկիրը համարվում է զուտ վարկատու, հակառակ դեպքում՝ զուտ պարտապան:
⁷ Առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացված վարկերի:

երկրներից՝ Ռուսաստանը, Վրաստանը եւ Ուկրաինան: որոնց բաժին է ընկնում ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության շուրջ 95%-ը:

Մակրոտնտեսական կանխատեսումներ

2005 թվականին կանխատեսվում է ՀՆԱ-ի 8.0% աճ և դեֆլյատորի 3.0% մակարդակ, ինչն էլ դրվել է բյուջետային ցուցանիշների հաշվարկման հիմքում: 2006-2007 թվականների համար ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է տարեկան 6.0, իսկ ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 3.0%-ի սահմաններում: Մեծ է նաեւ հավանականությունը, որ փաստացի աճը գերազանցի նշված կանխատեսումը, քանի որ տնտեսության մեջ ավելի բարձր տնտեսական աճի ապահովման համար ստեղծված են բավարար նախադրյալներ:

Աճի տեմպերի վերաբերյալ կանխատեսումները պայմանավորված են ինչպես արտաքին խնայողությունների հոսքերի որոշակի ավելացման, այնպես էլ ներքին խնայողությունների աճի կանխատեսումներով: Եկամտի ընդհանուր մակարդակի աճը և բաշխման բեռավածության որոշակի մեղմացումը կբերեն տնտեսությունում ներքին պահանջարկի աճի, հետևաբար նաև՝ եկամուտների ավելացման:

Ինչ վերաբերում է արտաքին պահանջարկին, ապա վերջին տարիների նկատված միտումները կշարունակվեն նաև հաջորդ տարիներին, մասնավորապես, տեղական արտադրության նկատմամբ արտաքին պահանջարկի աճի պայմաններում ապրանքների եւ ծառայությունների արտահանման աճը կանխատեսվում է 9.4%-ի չափով:

Միջնաժամկետ հատվածում ներմուծման ծավալների աճը կպայմանավորվի ինչպես համախառն տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ տեղական արտադրությունը կազմակերպելու համար հումքի ներկրման և օտարերկրյա ուղղակի ներդրումներով ֆինանսավորվող տեխնոլոգիաների ներմուծման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, կնվազեն ներմուծվող ապրանքները տեղական արտադրության ապրանքներով փոխարինելու՝ նախորդ տարիներին նկատված տեմպերը՝ պայմանավորված ներմուծվող ապրանքների փոխարինման հնարավորությունների սահմանափակությամբ: Արդյունքում՝ 2005-2007 թվականներին ապրանքների ներմուծման միջին տարեկան աճը կկազմի շուրջ 7.7%, իսկ ապրանքների և ծառայությունների համար՝ շուրջ 7.6%: Ապրանքների արտահանումն ավելի արագ է աճելու, քան ծառայություններինը. ակնկալվում է ապրանքների արտահանման ծավալների շուրջ 900 մլն ԱՄՆ դոլարի (ՖՕԲ) միջին տարեկան մակարդակ և միջին տարեկան 9.6% աճ (դոլարային արտահայտությամբ): Արտաքին ներդրումների ներհոսքի, ինչպես նաև ներմուծման փոխարինման և արտահանման աճի միտումների շարունակման պայմաններում ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները/ՀՆԱ հարաբերակցությունը կկրճատվի և 2005-2007 թվականներին կկազմի միջինում 5.6%:

Գնային փոփոխականների միջին ժամկետ ծրագիրը կազմված է՝ հիմք ընդունելով վերջին տարիների միտումները: Այն ուղղված է լինելու տնտեսական աճի, ներմուծվող ապրանքները հայ-

րենական արտադրության ապրանքներով փոխարինման և արտահանման խթանմանը: Սղաճի միջին ժամկետ ծրագիրը 3.0% է: Լողացող փոխարժեքի ռեժիմի կիրառման պայմաններում փոխարժեքի կանխատեսումները հիմնականում կրում են ինդիկատիվ բնույթ, և արտաքին հոսքերի՝ հատկապես արտաքին խնայողությունների զգալի ներհոսքի դեպքում հնարավոր են փոխարժեքի արժեքավորման երևույթներ: Տոկոսադրույքների ընդհանուր մակարդակը հիմնականում կլինի կայուն:

Հարկաբյուջետային քաղաքականության գերակայությունները, որոնք ամրագրված են նաև 2003 թվականի օգոստոսի 8-ին Կառավարության կողմից հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով, նախանշել են այս ոլորտի միջինժամկետ զարգացման հիմնական ուղղությունները: Մասնավորապես, հարկային քաղաքականության իրագործման արդյունքում ակնկալվում է՝

- հարկային եկամուտների առաջանցիկ աճ ՀՆԱ աճի նկատմամբ՝ գլխավորապես ստվերային տնտեսության կրճատման հաշվին,
- հարկային վարչարարության կատարելագործում, հարկային ու մաքսային մարմինների և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների որակական բարելավում,
- հարկային համակարգի շարունակական պարզեցում:

Միջին ժամկետ հատվածում պետական բյուջեի ծախսային և դեֆիցիտի կառավարման քաղաքականությունները կառուցված են լինելու հիմնականում հետեյալ հարկաբյուջետային սկզբունքների վրա.

- պետական բյուջեի սոցիալականացման աստիճանի բարձրացում,
- ծախսերի գծով ապառքների կուտակման բացառում,
- դեֆիցիտի կայուն և ցածր մակարդակի պահպանում՝ պետական պարտքի բեռը չծանրացնելու նպատակով,
- դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին արտոնյալ վարկային ռեսուրսների ներգրավում, պետական պարտատոմսերի օգտագործում գլխավորապես կանխիկ հոսքերի կառավարման համար:

Աղյուսակ 1.3. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ*

Ցուցանիշը	2002	2003	2004	2005
	փաստ		ծրագիր	կանխատեսում
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	1362.5	1623.3	1823.3	2028.2
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.2	13.9	8	8
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	2376.2	2804.7	3408.1	3791
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	0.7	4.6	4	3
Սղաճ (Ժ-շրջ-ի վերջ) (%)	2	8.6	3	3
Սղաճ (միջին, %)	1.1	4.7	7.2	3
Փոխարժեք (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար, միջին)	573.4	578.8	535	-
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ (մլրդ դրամ)				
	228.3	292	280.6	327.9
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ՀՆԱ (%)				
	16.8	18	15.4	16.2
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և սուրբեր/ՀՆԱ (%)				
	14.6	14	14.2	15.1
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր (մլրդ դրամ)				
	263.8	312.7	331.8	375.4
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր /ՀՆԱ (%)				
	19.4	19.3	18.2	18.5
Պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ (%)				
	2.6	1.3	2.8	2.3
Ապրանքային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)				
	-368.8	-434.1	-460.6	-481.6
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)				
	-882.5	-1130.2	-1216.3	-1310
Ներմուծում **/ ՀՆԱ (%)				
	-46.6	-50.1	-43.8	-42.9
Ապրանքների արտահանում (մլն ԱՄՆ դոլար)				
	513.8	696.1	755.7	828.4
Արտահանում** / ՀՆԱ (%)				
	29.4	32.2	28.4	28.2
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները, %)				
	-6.2	-6.8	-5.3	-5.6

*) 2005 թվականի ԱՄՆ դոլարով ցուցանիշների համար հաշվարկային փոխարժեք է ընդունված 2004 թվականի ծրագրային ցուցանիշը:

**) Ապրանքների և ծառայությունների արտահանում/ներմուծում: